«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մեթոդժամերի, խորհրդատվական քննարկումների դերն ու նշանակությունը որպես կրթական աշխատանքների արդյունավետության բարձացման միջոց:

Մեթոդիստ՝ Ռուզաննա Շախկյան

Մանկապարտեզ՝ «Շնողի «Հեքիաթ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023

Բովանդակություն

Ներածություն.....2

ԳԼՈՒԽ 1.ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....4

1.1 Նախադպրոցական կրթության կազմակերպումը,.....4

գործառույթները.....4

1.2 Մեթոդական աշխատանքի կազմակերպման ձևերը,.....5

նպատակներն ու խնդիրները.....5

ԳԼՈՒԽ 2.ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՄԵԹՈԴԺԱՄԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ.....8

2.1 Խնդիրներն ու նպատակները.....8

2.2 Մանկավարժական խորհրդի կազմը, գործունեության կազմակերպումը...9

2.3 Հետազոտական աշխատանք.....18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

Ներածություն

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակը երեխայի ֆիզիկական, բարոյական և հոգեկան առողջության պահպանումը և ամրապնդումն է, ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը: Այս նպատակներն իրականանում են նախադպրոցական հաստատությունների միջոցով, որոնք պարտավոր են երեխայի կյանքի, դաստիարակության և ուսուցման համար այնպիսի նյութական պայմաններ ստեղծել, որոնք համապատասխանեն պետական կրթական չափորոշիչներին և առողջապահության պահանջներին: Նախադպրոցական կրթության ոլորտի ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են նախադպրոցական տարիքի երեխաները և նախադպրոցական կրթության ոլորտում համապատասխան կրթական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող ֆիզիկական անձինք: Նախադպրոցական հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է երկու ուղղություններով՝ ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական: Ուսումնադաստիարակչական մասն են կազմում մանկավարժական աշխատողները, որոնց դերն ու ազդեցությունը խիստ նշանակալից են սաների ֆիզիկական և հոգեկան զարգացման գործում: Մանկավարժական գործունեությունն իրականանում է կրթական համալիր ծրագրերի միջոցով, որոնք պետք է համապատասխանեն երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններին: Մանկավարժական արդյունավետ գործունեությունը ենթադրում է աշխատանքների արդյունավետ և ճիշտ պլանավորում, կրթական աշխատանքների արդյունավետության բարձացմանն ուղղված մեթոդժամերի անցկացում, խորհրդատվական մարմինների ստեղծում, սեմինար պարապմունքների անցկացում, առաջավոր փորձի տարածում, կադրերի ինքնակրթության կազմակերպում և մասնագիտական զարգացման խնդիրների լուծում: Մասնագիտական զարգացումը պահանջում է նախադպրոցական համակարգի մանկավարժների և ղեկավար կադրերի ակտիվ ներգրավում անընդմեջ ուսուցման համակարգում և նրանց ստեղծագործական ներուժի զարգացումը: Մանկավարժների գործունեության բոլոր ձևերում կարևոր է մանկավարժների

որակավորման բարձրացումը: Այս գործընթացում կարևորվում է մանկավարժի մասնագիտական վարպետությունը՝ հաղորդակցման, ինտելեկտուալ, վերլուծական և կազմակերպչական հմտություններով, գիտելիքներով, փորձով, քննադատական և տրամաբանական մտածողությամբ: Որպես մեթոդիստ, ելնելով իմ մասնագիտական պարտականություններից և կարևորելով նախադպրոցական կրթության ճիշտ կազմակերպման և մանկավարժների որակավորման բարձրացումը՝ կազմակերպել եմ սեմինարներ, որոնցից մեկը կներկայացնեմ որպես հետազոտական աշխատանքի արդյունք: Սեմինարի թեման եղել է «Ծանոթացում ԽԻԿ համակարգին»: Ընտրել եմ այս թեման, քանի որ ես ինքս անցել էի վերապատրաստում և ծանոթացել ԽԻԿ համակարգի հետ, ուստի, գտնելով, որ այն աշխատանքների պլանավորման ավելի արդյունավետ մոդել է, սեմինարի միջոցով փորձել եմ գիտելիքները փոխանցել նաև դաստիարակներին:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ:

1.1 Նախադպրոցական կրթության կազմակերպումը, գործառույթները:

Նախադպրոցական հաստատության կառավարումը ղեկավարի նպատակաուղղված գործունեություն է՝ ուղղված հաստատության զարգացմանն ու գործարկմանը և դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Նախադպրոցական հաստատության տնօրենի հիմնական գործառույթներն են՝ մանկավարժական գործունեության պլանավորում, կազմակերպում, կարգավորում և վերլուծություն:

Կառավարման փուլն սկսվում է մանկավարժական գործունեության վերլուծությունից, որն ուղղված է մանկավարժական գործընթացի օբյեկտիվ գնահատմանը և այդ հիմքի վրա հանձնարարականների կազմմանը:

Մանկավարժական գործունեության վերլուծության առարկան մանկավարժական գործընթացն է՝ ամբողջովին կամ առանձին մասերով: Տարեկան արդյունքների խոր և համակողմանի վերլուծության հիման վրա որոշվում են հաջորդ ուսումնական տարվա նպատակներն ու խնդիրները:

Հետևաբար, մանկավարժական գործունեության վերլուծությունն ընկած է կառավարման հաջորդ՝ պլանավորման հիմքում:

Պլանավորումը կենտրոնացնում է ամբողջ կոլեկտիվի աշխատանքը: Այն ներառում է մանկավարժների հետ մեթոդական աշխատանքի ողջ համակարգը: Իսկ պլանի իրականացման համար անհրաժեշտ է կազմակերպական գործառույթ, որը ենթադրում է հաստատությունում համակողմանի և բազմաբովանդակ աշխատանք մանկավարժական անձնակազմի հետ՝ մասնագիտական որակի բարձացման, երեխաների զարգացման համար լավագույն պայմանների ստեղծման ուղղությամբ:

Կազմակերպումը սերտորեն կապված է վերահսկողության գործառույթի հետ: Վերահսկողության և կազմակերպական գործառույթները խիստ փոխկապակցված են:

Կարգավորման, կանոնակարգման գործառույթները անխզելիորեն կապված են մնացած բոլոր գործառույթների հետ: Հենց այս գործառույթի շնորհիվ ղեկավարը ժամանակին կոլեկտիվի աշխատանքի մեջ մտցնում է շտկումներ, ուղղումներ՝ կարողանալով տվյալ փուլում առանձնացնել գլխավորը, առաջնայինը:

Յուրաքանչյուր հաստատություն ունի իր ղեկավարման մեթոդները:

Կառավարման մեթոդները կառավարման համակարգի փողկապակցված գործընթացներում միջոցներ են՝ նպատակների և սկզբունքների արդյունավետ իրացման համար:

1.2 Մեթոդական աշխատանքի կազմակերպման ձևերը, նպատակներն ու խնդիրները:

Նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքի արդյունավետության հիմքը կրթադաստիարակչական գործընթացի մշտական կատարելագործումն է:

Մեթոդական աշխատանքը դաստիարակների, մանկավարժների անընդհատ կրթության համակարգի բաղկացուցիչ մասն է, որը պետք է ապահովի կրթադաստիարակչական գործընթացի զարգացումը՝ մանկավարժական և հոգեբանական գիտությունների նոր նվաճումներին համապատասխան: Կրթական աջակցության նպատակն է գիտամեթոդական տեխնոլոգիաների հաղորդումը, մշակումը և կիրառումը՝ ուսումնական հաստատության անհատական պլանների, կիրառվող և փորձարկվող ծրագրին համապատասխան, որի հիմքում ընկած են սաների տարիքային, անհատական առանձնահատկությունները: Կրթական աջակցությունն իրականանում է խորհրդատվական քննարկումների, մեթոդժամերի և սեմինար-պրակտիկումների միջոցով:

Այս ամենը մանկապարտեզում կազմակերպում և իրականացնում է մեթոդիստը և տնօրենը :

Մանկապարտեզում իրականացվող մեթոդական աշխատաքի նպատակներն են՝

- նախադպրոցականի ուսուցման և դաստիարակության առավել ռացիոնալ մեթոդների և հնարների յուրացում, տիրապետում,

- կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում մանկավարժի ընդհանուր ուսուցողական և մեթոդական մակարդակի բարձրացում,
- մանկավարժական կոլեկտիվում միմյանց աշխատանքային փորձի փոխանակում
- կրթադաստիարակչական գործընթացի որակի բարձրացում, մանկավարժների տեսական և փորձարարական, վերլուծական ունակությունների զարգացում:

Մեթոդական աշխատանքի խնդիրներն են.

- Մանկավարժական գիտության նվաճումների ներդրում աշխատանքային պրակտիկայում,
- Մանկավարժական կոլեկտիվի սիստեմատիկ գործունեության և ուսումնասիրության ընթացքում բացահայտված ուղղության ձևավորում,
- Մանկավարժերի տեսական և հոգեբանական գիտելիքների մակարդակի բարձրացում,
- Նոր կրթական ծրագրերի, ուսումնական պլանների, կրթական պետական չափորոշիչների ուսումնասիրություն,
- Ինքնակրթության հարցում մանկավարժներին խորհրդատվական աջակցության ցուցաբերում:

Կարևոր է հիշել, որ մանկապարտեզում մեթոդական աշխատանքի արդյունավետության իրական գնահատականը որոշվում է վերջնական արդյունքներով, այլ ոչ թե անցկացված միջոցառումների թվով:

Գոյություն ունեն կադրերի հետ տարվող մեթոդական աշխատանքի տարբեր ձևեր՝ անհատական և խմբային:

Անհատական աշխատանքի ձևերից են ինքնակրթությունը, անհատական խորհրդատվությունները, անհատական զրույցները: Ինքնակրթության հիմքում ընկած են պարապողի անմիջական անձնական հետաքրքրությունը և ինքնուրույնությունը:

Ինքնակրթության հիմնական ձևը գրականության ուսումնասիրությունն է:

Ինքնակրթության աղբյուրներն են հանդիսանում նաև դասախոսությունները, զեկույցները, թանգարանների, ցուցահանդեսների այցելությունները, մասնագետների կոնսուլտացիաները:

Այսպիսով՝ ինքնակրթության ձևերը բազմաբնույթ են՝

- աշխատանք գրադարաններում՝ գրքի հետ, պարբերականներով,
- աասնակցություն խորհրդակցությունների, համաժողովների,
- խորհրդատվության ստացում բարձրագույն ուսումնական հաստատություններում,
- աշխատաք մեթոդական կենտրոններում:

Մանկավարժի ջանքերի արդյունքում կատարելագործվում են երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքները, նախադրյալներ ստեղծվում նոր փորձի ձեռքբերման համար: Մեթոդական աշխատանքի խմբային ձևերն են՝ մանկավարժական խորհրդակցությունները, մեթոդժամերը, խորհրդատվական քննարկումները և այլն:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԵԹՈԴԺԱՄԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ:

2.1 Խնդիրներն ու նպատակները:

Մանկավարժական խորհուրդները նախադպրոցական կրթական հաստատության կառավարման մշտական գործող կոլեգիալ մարմինն է , կադրերի հետ տարվող մեթոդական աշխատանքի փոխներգործուն ձև: Այն ստեղծվում է երեխաների կյանքի և առողջության պահպանման, նրանց հետ տարվող դաստիարակչական գործընթացի , կադրերի հետ տարվող մեթոդական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Մանկավարժական խորհուրդն ստեղծվում է բոլոր մանկավարժական հաստատություններում՝ անկախ կարգավիճակից և կազմակերպաիրավական ձևից:

Մանկավարժական խորհրդի հիմնական խնդիրներն են

- Երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքի որակի մակարդակի, կրթական գործընթացի արդյունավետության բարձրացումը,
- Մանկավարժական գիտության նվաճումների , նորի և առաջավորի , նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրումը գործնականում,
- Երեխաների խնամքի , առողջության պահպանման ո ւամրապնդման աշխատանքների բարելավումը,
- դաստիարակների ստեղծագործական ակտիվության բարձրացումը,
- մանկավարժական անձնակազմի մասնագիտական վարպետության, մեթոդական պատրաստակամության բարձրացումը:

Մանկավարժական խորհուրդը իրավասու է .

- ✓ հաստատել մանկապարտեզի պարապմունքների բաշխման գրաֆիկը՝ ըստ տարիքային խմբերի,
- ✓ ընտրել և վերլուծել երեխաների ուսուցման և դաստիարակության ծրագիրը՝ երաշխավորված ԿԳՄՍ-ի կողմից,

- ✓ ընտրել կրթադաստիարակչական գործընթացի բովանդակության մեթոդներն ու ձևերը, երեխաների հետ տարվող աշխատանքների մեթոդական ուղղությունները,
- ✓ կազմակերպել լրացուցիչ կրթական ծառայություններ,
- ✓ քննարկել կադրերի որակավորման բարձացման և վերապատրաստման ծրագրեր,
- ✓ քննարկել հեղինակային ծրագրեր և նախադպրոցական ուսուցմանն ու դաստիարակությանն առնչվող նորմատիվ ու դիրեկտիվ փաստաթղթեր,
- ✓ հաստատտել օրվա ռեժիմը՝ ըստ տարիքային խմբերի:

2.2 Մանկավարժական խորհրդի կազմը, գործունեության կազմակերպումը:

Մանկավարժական խորհուրդն ստեղծվում է՝ անկախ կազմակերպական ձևից ,բոլոր տեսակի նախադպրոցական հաստատություններում՝ 3-ից ոչ պակաս մանկավարժի առկայության դեպքում:

- ✓ Մանկավարժական խորհրդի նախագահն ի պաշտոնե տնօրենն է:
- ✓ Մանկավարժական խորհուրդն աշխատում է խորհդի կողմից հաստատված պլանով:
- ✓ Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են բոլոր դաստիարակները, մեթոդիստը, ծնողկոմիտեի նախագահը, բուժքույրերը , հոգեբանը, լոգոպետը:
- ✓ Մանկավարժական խորհրդի նիստը հրավիրվում է ոչ պակաս, քան 2 ամիսը մեկ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում:
- ✓ Մանկավարժական խորհրդի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ծնողներ, հարակից հանրակրթական դպրոցի, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ճյուղային գերատեսչությունների ներկայացուցիչներ:
- ✓ Մանկավարժական խորհրդի որոշումները կայացվու են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

- ✓ Մանկավարժական խորհրդի որոշումները պարտադիր են մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամի համար:
- ✓ Մանկավարժական խորհրդի որոշումներում ամրագրվում են կոնկրետ միջոցառումները, կատարման ժամկետները և պատասխանատու անձը:
- ✓ Արձանագրությունների գրքում արձանագրվում են մանկավարժական խորհրդում ընդգրկված հարցերի քննարկման ընթացքը, մանկավարժական խորհրդի անդամների առաջարկություններն ու դիտողությունները:
- ✓ Մանկավարժական խորհուրդներում քննարկվում են կրթադաստիարակչական համալիր ծրագրի կատարումը, երեխաների առողջության վիճակը ,
- ✓ Դպրոցին նախապատրաստվածության մակարդակը, թեմատիկ և հանրագումարային ստուգման արդյունքները:
- ✓ Մանկավարժական խորհուրդն իր կազմից ընտրում է քարտուղար՝ մեկ տարի ժամանակով:
- ✓ Նիստերի արձանագրությունները ստորագրվում են նախագահի և քարտուղարի կողմից:

Մանկավարժական խորհրդի արձանագրությունների գիրքը համարակալվում է, հաստատվում նախադպրոցական հաստատության տնօրենի ստորագրությամբ և կնիքով:

Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվող հարցերը:

Յուրաքանչյուր դպրոցական հաստատություն որոշում է ուստարվա ընթացքում անցկացվող մանկխորհրդի նիստերի քանակը և քննարկման ենթակա հարցերի բովանդակությունը:

Նիստերն իրենց բովանդակությամբ կարող են լինել թեմատիկ և հանրագումարային:

Թեմատիկ խորհրդի նիստերում քննարկվում են հարցեր, որոնք ամրագրվում են տարեկան պլանում՝ որպես հիմնական խնդիրներ:

Հանրագումարային խորհուրդները կարող են նվիրվել ծրագրի իրականացմանը և երեխաների հետ տարվող աշխատանքների կիսամյակային, տարեկան

արդյունքներին: Քննարկվող խնդիրները կարող են շատ լինել, սակայն միշտ ուշադրության կենտրոնում պետք է լինեն երեխաների դաստիարակության, ուսուցման, առողջության պահպանման հարցերը:

Պարտադիր կարգով աշխատանքային պլանում ընդգրկվում են ընթացիկ ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատումը, խմբերի համալրումը, կադրերի տեղաբաշխումը, լրացուցիչ ծառայությունների կազմակերպումը:

Առաջին նիստը պետք է նվիրել այնպիսի հարցերի քննարկմանը, որոնք նախատեսված են հաստատության տարեկան պլանով՝ որպես առաջին խնդիր կամ աշխատանքի առաջին ուղղություն: Այն կարող է լինել թեմատիկ խորհուրդ, որտեղ կլսվեն մանկավարժական վերահսկողության, երեխաների ախտորոշման արդյունքները, առանձին մանկավարժների աշխատանքի փորձը,և կընդունվեն որոշումներ՝ նախադպրոցական հաստատության աշխատանքների կատարելագործման ուղղությամբ:

Երկրորդ նիստին կարելի է ի մի բերել առաջին կիսամյակի աշխատանքի արդյունքները: Այդ խորհուրդ պայմանական ձևով անվանում են հանրագումարային: Կարևոր է, որ դաստիարակները նիստին ներկայացնեն երեխաների զարգացման մակարդակը, նրանց գիտելիքները, կարողությունները, հմտությունները՝ ըստ կրթադաստիարակչական ծրագրի, և բացահայտեն՝ ի՞նչն է հաջողվել, ինչը՝ ոչ, նշեն հեռանկարներն այդ ուղղությամբ: Կարևոր է քննարկել նաև երեխաների առողջության և հուզական բարենպաստության ապահովման հարցերը:

Օրակարգը պետք է այնպես կառուցել, որ մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցները հաշվետու լինեն իրենց աշխատանքի մասին կամ հաղորդակցվեն միմյանց հետ իրենց փորձի մասին:

Երրորդ նիստը կապվում է տարեկան պլանի հիմնական երկրորդ խնդրի հետ: Թեմատիկ ստուգումը, որն անց է կացվել նիստից մեկ ամիս առաջ, տալիս է հարուստ նյութ՝ նիստի օրակարգի անցկացման համար: Վեր հանելով երեխաների հետ տարվող աշխատանքների այս կամ այն թերությունները՝ կարևոր է գտնել դրանց պատճառները և որոշել գործողությունների պլանը: Առավել հաճախ այդ թերությունները պայմանավորված են մանկավարժների անհրաժեշտ գիտելիքների բացակայությամբ: Ուստի մեթոդիստը պետք է պլանավորի դաստիարակների

որակավորման բարձրացման ուղղությամբ գործնական օգնության ցուցաբերում, խորհրդատվություններ, բաց պարապմունքներ, սեմինարներ:

Եզրաձակիչ նիստը պլանավորվում է, սովորաբար, մայիսին կամ հունիսին ծնողկոմիտեի նախագահին, հարակից դպրոցի ուսուցիչներին և մեթոդական ծառայությունների մասնագետներին:

Նշված նիստի օրակարգի թեմաներն են՝

- աշխատանքի տարեկան արդյունքները,
- աշխատանքի հեռանկարները հաջորդ տարում,
- ամառային առողջարարական աշխատանքների կազմակերպումը:

Նախադպրոցական հաստատության աշխատանքում չեն բացառվում նաև մանկխորհրդի արտահերթ նիստերը այն ցանկի կտրվածքով, որ չի ընդգրկվել տարեկան պլանում, սակայն հրատապ է տվյալ փուլի համար:

Մանկխորհրդի որոշումները պետք է հստակ ձևակերպում ունենան, որտեղ նշված լինեն պատասխանատուները և կատարման ժամկետները:

Որոշումներն ընդունվում են օրակարգի յուրաքանչյուր կետի համար առանձին: Որոշումներում արտացոլվում է ամբողջական աշխատանքը, որը պետք է ամբողջությամբ իրականացվի ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման նպատակով և յուրաքանչյուր տարիքային խմբում՝ առանձին վերցրած:

Մանկավարժական խորհրդի որոշումներն իրավազոր են, եթե նիստին մասնակցում են նրա անդամների կեսից ավելին:

Մանկավարժական խորհուրդների այլընտրաքային տարբերակներ:

Ինչպես նշվեց, կրթության որակի բարձացմանը նպաստում է նախադպրոցական հաստատությունների մանկավարժների մասնագիտական վարպետության զարգացմանն ուղղված նոր, արդյունավետ մեթոդների օգտագործումը: Ավանդական ձևերը սպառել են իրենց նշանակությունը՝ քիչ արդյունավետություն, ոչ բավարար հետադարձ կապի ապահովման պատճառով:

Մանկավարժների ընդհանուր և մասնագիտական կուլտուրայի բարձրացման համար անհրաժեշտ է օգտագործել աշխատանքի առավել ակտիվ ձևեր ու մեթոդներ, որոնք կնպաստեն կադրերի մասնագիտական վարպետության և

ստեղծագործական աճի զարգացմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ համատեղ քննարկման ժամանակ մասնակիցները կշռադատում, հիմնավորում են իրենց դիրքորոշումը, հանդես են գալիս որպես ընդդիմախոսներ, անհրաժեշտ է հաճախ օգտագործել աշխատանքի խմբային ձևեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները:

Որակավորման մակարդակի բարձացման տարբերակներից մեկը մանկավարժների խնդրահարույց/ պրոբլեմատիկ/ խմբերի ստեղծումն է: Այն կարող է ունենալ տարբեր անվանումներ, օրինակ՝ որակավորման աճ և կատարելագործում/ՈԱԿ/: Խումբը կազմվում է մանկավարժների հարցադրումների հիման վրա:

Հիմնական խնդիրնեն են.

- մանկավարժական գործունեության մեջ անհատականության գիտակցումը,
- մասնագիտական ինքնագիտակցության ոլորտի ընդլայնումը,
- մանկավարժների անձնական ռեսուրսների ակտիվացումը,
- ստեղծագործական առանձնահատկությունների զարգացումը:

Ոչ ավանդական մանկխորհուրդների նիստերի մի մասն է կազմում գործնական խաղերը, որոնք լայն տարածում են գտել մանկավարժական որակավորման համակարգում: Դրանք օգնում են առավելագույնս ակտիվացնել մասնակիցներին՝ դրված մպատակներին հասնելու համար: Գործնական խաղը ուսումնական է, որի մասնակիցներին բաժանվում են որոշակի դերեր: Վերջիններս սովորում են քննարկել, լուծել մարդկային փոխհարաբերությունների հետ կապված բարդ խնդիրներ: Գործնական խաղի նախապատրաստումը և անցկացումը ստեղծագործական գործընթաց է: Ընտրելով արդեն մշակված խաղի մոդեը՝ կարելի է փոփոխել առանձին տարրեր՝ առանց փոխելու մոդելը: Գործնական խաղի փուլերն են.

- գործնական խաղի նախագծի ստեղծում,
- գործողությունների հաջորդականության նկարագրում,
- անցկացվող խաղի կազմակերպման նկարագրություն,
- մասնակիցների համար առաջադրանքների կազմում,
- անհրաժեշտ պարագաների նախապատրաստում:

Մանկավարժական խորհրդակցություններ

Մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվում են նախադպրոցականների դաստիարակության և ուսուցման հարցերը, վերլուծվում թերությունները, վրիպումները, ընդունվում որոշումներ դրանց վերացման ուղղությամբ, կազմակերպվում աշխատանքային փորձի փոխանակումներ: Մանկավարժական

խորհրդի քննարկման հարցերի թեմատիկան նախատեսվում է նախադպրոցական ուսումնական հաստատության տարեկան պլանում, իսկ անհրաժեշտության դեպքում կատարվում են ճշգրտումներ և լրացումներ: Թեմատիկայի ընտրությունը և մանկավարժական խորհրդի նախապատրաստումը իրականացնում են մեթոդիստը և տնօրենը:

Օրակարգի գլխավոր հարցերը, սովորաբար, մանկավարժների աշխատանքի արդյունքն է, երեխաների զարգացման մակարդակը, նրանց առողջությունը, մանկավարժների և ծնողների համատեղ աշխատանքի ձևերը:

Մեթոդիստը և տնօրենը օգնում են մանկավարժներին՝ համեմատելու երեխաների գիտելիքները, կարողությունները և հմտությունները պետական կրթական չափորոշիչների հետ՝ ընդգծելով աշխատանքի գլխավոր ուղղությունները: Եզրափակիչ խոսքը կարևոր պահ է մանկավարժական խորհրդում: Այն պետք է լինի կոնկրետ, համառոտ, պարունակի կառուցողական առաջադրանքներ:

Խորհրդատվություններ

Ցանկացած խորհրդատվություն մեթոդիստից պահանջում է իր իրավասության շրջանակներում՝ դաստիարակի մասնագիտական հետևողական նախապատրաստում: Հիմնական խորհրդատվությունները պլանավորվում են տարվա համար: Անհրաժեշտության դեպքում պլանում ուղղություններ են մտցվում:

Կիրառվում են խորհրդատվությունների տարբեր ձևեր:

Այսպես՝ պրոբլեմային ուսուցման դեպքում ձևավորվում է պրոբլեմը, և ցույց են տրվում դրա լուծման ուղիները: Ավելի հաճախ խորհրդատվությունները կարող են անցկացվել բացատրության ձևով: Դաստիարակների միջև փորձի փոխանակումը կարող է իրականացվել էվրիստիկ (հուշող հարցերով բացատրելու մեթոդ)զրույցի տեսքով: Զրույցի ընթացքում վերծանվում են ուսումնասիրվող նյութին առնչվող

մեթոդական գրականության դրույթները, տրվում բացատրություններ այն հարցերի շուրջ, որոնք հետաքրքրում են մանկավարժներին, բացահայտվում են սխալները, տեղեկատվության ընկալմանյուրացման մակարդակը:

Նոր գիտելիքերի հաղորդման նպատակով կազմակերպվող էվրիստիկ զրույցը պահանջում է լուրջ նախապատրաստում: Խորհրդատվության ընթացքում կիրառվում է բանավեճի մեթոդը: Ձևով և բովանդակությամբ բանավեճը մոտ է զրույցի մեթոդին: Այն նախ և առաջ ենթադրում է հետևյալ բաղադրիչների ապահովումը՝ համակողմանիորեն քննարկման կարիք ունեցող թեմայի ընտրություն, հարցերի նախապատրաստում, ներածական և եզրափակիչ խոսք: Ի տարբերություն զրույցի՝ բանավեճում անհրաժեշտ է վիճելի հարցերի առաջադրում, մտքերի պայքար, բախում: Ահա թե ինչու բանավեճի կիրառումը մեթոդիստից պահանջում է մասնագիտական պատրաստվածություն, մանկավարժական վարպետություն, մեծ կուլտուրա, տակտ: Ուստի բանավեճը վարելիս անհրաժեշտ է ցուցաբերել իրավիճակային արագ կողմնորոշում, վստահության մթնոլորտի ձևավորում: Եզրափակիչ խոսքում համառոտ վերլուծվում են մասնակիցների ելույթները, բացահայտվում սկբունքային հարցերը:

Ծնողական խորհրդատվություններ ու ժողովներ

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկության և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության արդյունքում պետք է իրականացվեն հետևյալ խնդիրները.

- ✓ ծնողներին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առաձնահատկություններին, նախադպրոցականի դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին,
- ✓ ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկավարժական գործընթացին,
- ✓ աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Հայտնի են արդյունավետ ու կանոնավոր համագործակցության հետևյալ

ուղղությունները

- Ծնողական ժողովներ- քննարկում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող հարցեր:
- Առավոտյան հանդիպումներ-ծնողներին նախապես հայտել ներկայացվող թեմաները:
- Տնայցեր
- Հեռախոսային զանգեր
- Անհատական գրառումների գրքույկներ
- Պատի տեղեկատվական թերթեր
- Առաջարկությունների տուփեր:

Ընտաիքի հետ համագործակցությունը կարող է իրականացվել նաև այլ պաշտոնական ձևերով, ինչպիսիք են կլոր սեղանները, տարբեր թեմատիկ քննարկումները, բաց դռների օրերը, ցուցահանդեսները, անհատական զրույցները և այլն:

Սեմինարներ և սեմինար-պրակտիկումներ

Սեմինարները և սեմինար-պրակտիկումները համարվում են դաստիարակների որակավորման բարձացման ամենաարդյունավետ ձևերը:

Ուսումնական տարվա սկզբում հաստատության ղեկավարը կազմում է աշխատանքի մանրամասն պլան: Առաջին իսկ պարապմունքին կարելի է առաջադրել պլանը, լրացնել այն կոնկրետ այնպիսի հարցերով, որոնց պատասխանները կցանկանային լսել դաստիարակները:

Սեմինարի ղեկավարը կարող է լինել տնօրենը, մեթոդիստը կամ հրավիրված մասնագետը: Սեմինարը կարող է բաղկացած լինել մի քանի պարապմունքներից, որտեղ համադրվում են տեսական հարցերի քննարկումները գործնական պրոբլեմների հետ, ինչպես նաև նախատեսվում է ծանոթացում նոր գրականությանը, առաջավոր փորձին:

Սեմինար-պրակտիկումի առանձնահատկությունն այն է, որ նրանում ընդգրկվում են գործնական առաջադրանքներ, գործընկերների աշխատանքների դիտումներ, որոնց հաջորդում են քննարկումներ: Կարևոր է, որ սեմինարի արդյունքները ձևակերպվեն

կոնկրետ և իրապես իրագործվող հանձնարարականների տեսքով, որոնք պետք է գտնվեն ղեկավարության վերահսկողության ներքո: Էական է, որ սեմինար-պրակտիկումի ընթացքում հնարավորություն է ընձեռնվում բանավեճերի, պրոբլեմային իրավիճակների ստեղծման, տարբեր տեսակետների քննարկման համար: Նման աշխատանքի կարևորագույն ձևերից են նաև ծնողների համար կազմակերպվող սեմինար-պրակտիկումները:

Հետազոտական աշխատանք

Սեմինար	
թեմա	Ծանոթացում ԽԻԿ համակարգին:Ինտեգրված պարապմունք
նպատակը	**1**.մանկավարժական անձնակազմի մասնագիտական վարպետության, մեթոդական պատրաստակամության բարձրացում, **2**. դաստիարակների ստեղծագործական ակտիվության բարձրացում, **3**. ուսումնադաստիարակչական աշխատանքների միատեսակ և ավելի արդյունավետ մոդելավորման պլանավորում:
ժամատախտակ	**Քայլ1**. «Սառույց կոտրող» վարժություն,ակնկալիքների ծառ **Քայլ2**. ԽԻԿ- ը որպես պարապմունքի կազմակերպման մոդել, փուլերը **Քայլ3.** ԽԻԿ-ի անցկացման մեթոդիկաները՝ խթանման, իմաստի ընկալման և կշռադատման փուլերում: **Քայլ4**Թարմացնող.վարժություն **Քայլ5** .Ինտեգրված պարապմունք **Քայլ6.** Գործնական աշխատանք ենթախմբերով- կազմել ինտեգրված պարապմունքի պլան ԽԻԿ համակարգով: **Քայլ7.** Կշռադատում- ակնկալիքների ծառ
Տևողությունը	**1 ժամ,15 րոպե**



Եզրակացություն

Նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքի արդյունավետության հիմքը կրթադաստիարակչական գործընթացի մշտական կատարելագործումն է: Մեթոդական աշխատանքը դաստիարակների, մանկավարժների անընդհատ կրթության համակարգի բաղկացուցիչ մասն է: Այն պետք է լինի ճկուն և ապահովի կրթադաստիարակչական գործընթացի զարգացումը՝ մանկավարժական և հոգեբանական գիտությունների նոր նվաճումներին համապատասխան: Մեթոդական աշխատանքների հիմնական պատասխանատուն ուսումնական գծով փոխտնօրենն է՝ մեթոդիստը, որի գործունեության մեջ կարելի է առանձնացնել երկու ուղղություն՝ մեթոդական աշխատանքների գիտական կառավարում և մանկավարժական գործընթացի մեթոդական ապահովում:

Մեթոդական աշխատանքների գիտական կառավարումն իրենից ներկայացնում է մեթոդժամերի, խորհրդակցությունների, սեմինարների կազմակերպում և անցկացում, որի նպատակը երեխաների կյանքի և առողջության պահպանման, նրանց հետ տարվող կրթադաստիարակչական գործընթացի, կադրերի հետ տարվող մեթոդական աշխատանքների արդյունավետության բարձացումն է:

Գրականության ցանկ

1.«Նախադպրոցական մանկավարժություն» Ս.Ա.Մարության, Ա.Մ. Դալլաքյան (էջ 5-6, 12)
2. ԿԳՍՄ նախարարություն « Նախադպրոցական կրթության մասին օրենք»
3. Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան 2011, էջ 158-159
4.3-6 տարեկանների կրթական ծառայությունների կազմակերպումը այլընտրանքային մոդելներով, էջ 138-139
5.Ուսումնամեթոդական ձեռնարկ մանկապարտեզի համար, Հ.Միտոյան, Լ.Սմբատյան , էջ 62-81